

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2019թ.

N-----Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱՅԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ**  
**ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը`

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն ՀՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ. **31** հասցեում փակցնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱՅԱԴՑԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՀՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Համբարձում Սայադյանը ծնվել է **1909**թ. հուլիսի **23**-ին Նախիջևանում: **1936**թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, այնուհետև ընդունվել է Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի «Սովպրեն» (այժմ՝ «Նաիրիտ») գործարան՝ որպես նախագծային բաժնի զլխավոր տեխնոլոգ: Համբարձում Սայադյանը մասնակցություն է ունեցել գործարանի նախագծմանը և վերանախագծմանը, մասնավորապես, կառուցվել են նրա կողմից նախագծված քլորբենզոլի արտադրամասը և վերանախագծված մի շարք այլ արտադրամասեր:

**1945-1976**թթ. տեղափոխվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ՝ որպես ամբիոնի վարիչ և, միաժամանակ, շուրջ **24** տարի եղել է պրոֆլեմային լաբորատորիայի գիտական ղեկավար:

Նրա ղեկավարությամբ մշակվել և արդյունաբերության մեջ ներդրվել են բենզոլի քլորացման (անընդհատ եղանակով), հեքսաքլորեթանի, քլորոպրենային կաուչուկի թափոններից սինթետիկ լաքի ու նատրիումի ացետատի, մեթիլացետատամթանոլ-ջուր խառնուրդից անջուր նատրիումի ացետատի, պոլիվինիլացետալների (կատարելագործված եղանակով) և երկալիցիանամիդի ստացման տեխնոլոգիաները:

Համբարձում Սայադյանի կողմից ղեկավարած գիտահետազոտական աշխատանքները ներդրվել են արտադրությունում, պաշտպանվել է **10** թեկնածուական ատենախոսություն, ամրագրվել են որպես հեղինակային արտոնագրեր և գիտական հոդվածներ:

Համբարձում Սայադյանը մահացել է **1991**թ. փետրվարի **8**-ին Երևանում:

ՀՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց **հ.31** հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Ա. Սայադյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱՅԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱՅԱԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**